

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- 2016 թվականի N -Ն

«ԿԱՅՈՒՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՍՆՈՒՆԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ
ԴՐԱ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Պարենի համաշխարհային ծրագրի կողմից իրականացվող «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շարունակության ապահովման ու զարգացման նպատակով ստեղծել «Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամ (այսուհետ՝ հիմնադրամ):

2. Սահմանել, որ հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, որի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն է:

3. Հաստատել հիմնադրամի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

4. Հիմնադրամի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Բագրատ Նորիկի Եսայանին:

5. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում՝ օրենքով սահմանված կարգով ապահովել հիմնադրամի պետական գրանցումը.

2) Հիմնադրամի պետական գրանցումից հետո եռամսյա ժամկետում հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անհատական կազմը ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ հաստատման.

3) ներկայացնել առաջարկություններ հիմնադրամին հատկացվող գույքի և տարածքի վերաբերյալ:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ԿԱՅՈՒՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՍՆՈՒՆԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամը (այսուհետ՝ հիմնադրամ) հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է կրթական, սոցիալական, առողջապահական, տնտեսական, և այլ հանրօգուտ նպատակներ:

2. Հիմնադրամն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, որի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն է:

4. Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում և (կամ) օտարերկրյա պետություններում:

5. Հիմնադրամն ունի իր անվանմամբ կլոր կնիք (հայերեն, անգլերեն և ռուսերեն գրառումներով), ձևաթղթեր, ինչպես նաև այլ անհատականացման միջոցներ:

6. Հիմնադրամի անվանումն է՝

- 1) հայերեն լրիվ՝ «ԿԱՅՈՒՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՍՆՈՒՆԴ» հիմնադրամ.
- 2) հայերեն կրճատ՝ ԿԴՍՀ.
- 3) անգլերեն լրիվ՝ Sustainable school feeding Foundation.
- 4) անգլերեն կրճատ՝. “SSFF”

5) ռուսերենլրիվ՝ Фонд “Устойчивое школьное питание”.

6) ռուսերենկրճատ՝ ФУШП:

7. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ 0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2:

8. Հիմնադրամի շահառուներն են ուսումնական հաստատությունները ու դրանց սովորողները, <<Կայուն դպրոցական սնունդ>> ռազմավարությանն ու դրա իրականացման միջոցառումների ծրագրին առնչվող կամ ծրագրում ներգրավված Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա առևտրային ու ոչ առևտրային կազմակերպությունները և քաղաքացիները:

II. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

9. Հիմնադրամը պետական գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ, օգտվում է իրավաբանական անձի համար օրենքով սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտականություններ:

10. Հիմնադրամն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների բանկերում հաշվարկային և այլ հաշիվներ, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

11. Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող ողջ գույքով: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների, իսկ հիմնադիրը՝ հիմնադրամի պարտավորությունների համար:

12. Հիմնադրամի գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

III. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

13. Հիմնադրամի նպատակներն են՝

1) Ապահովել ուսումնական հաստատություններում սովորողներին առողջ, բազմազան հավասարակշռված սննդի մատակարարման արդյունավետությունը.

2) նպաստել սովորողների կրթության որակի, առողջության, սոցիալական պաշտպանվածության բարելավմանը.

3) նպաստել ուսումնական հաստատություններում առողջ սննդի կազմակերպման առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորմանը.

4) խթանել տեղական արտադրությունը.

5) ներգրավել համայնքը, գործարար շրջանակները, սփյուռքի կազմակերպությունները և այլ դոնորներ՝ դպրոցական սննդի կազմակերպման և զարգացման գործում:

14. Հիմնադրամի հիմնական գործառույթներն են՝

1) Սննդի և սննդամթերքի պատրաստման և մատակարարման կազմակերպումը

2) Ուսումնական հաստատություններում սննդի կազմակերպման պատասխանատուների մասնագիտական վերապատրաստման ու որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպումը.

3) դպրոցական սննդի կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների, գույքի և սարքավորումների ապահովումը.

4) սննդի կազմակերպման ոլորտում միջազգային և տեղական փորձի ուսումնասիրումը, փոխանակման ծրագրերի իրականացումը.

5) համակարգել համայնքի, գործարար շրջանակների, սփյուռքի և այլ դոնորների մասնակցությունը.

6) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն առաջարկներ ներկայացնել դպրոցական սննդի կազմակերպման ոլորտի օրենսդրական դաշտի բարելավման ուղղությամբ.

7) իրականացնել դպրոցական սննդի ծրագրերին հասարակական տեղեկացվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ.

8) անցկացնել դպրոցական սննդի ոլորտի ուսումնասիրություններ և հետազոտություններ.

9) զբաղվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հիմնադրամի նպատակներից բխող այլ գործունեությամբ:

IV. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

15. Հիմնադրի կողմից հիմնադրամին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է:

16. Հիմնադրամը տիրապետում, օգտագործում ու տնօրինում է իրեն պատկանող և իր կողմից ձեռք բերված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները՝ սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

17. Հիմնադրամը, որպես սեփականություն, կարող է ունենալ շարժական և անշարժ գույք, դրամական միջոցներ, բաժնետոմսեր, այլ արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

18. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուրներ կարող են լինել՝

1) հիմնադրի կամավոր ներդրումները.

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից դրամական մուտքերը.

3) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվություններն ու նվիրաբերությունները.

4) հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

5) դրամաշնորհները.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

19. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադրի, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև հիմնադրամի աշխատողների՝ բացառությամբ աշխատողների աշխատավարձերի և, հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված, փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ հիմնադրամի հիմնադիրը, հիմնադրամի մարմինների անդամները, ինչպես նաև հիմնադրամի աշխատողները սույն կանոնադրությամբ նախատեսված շահառուներ են:

V. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20. Հիմնադրամը, իր կանոնադրական նպատակներին համապատասխան, իրավունք ունի՝

1) անարգել տարածելու տեղեկություններ իր գործունեության մասին.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալու տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.

3) ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ.

4) ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինելու դրանց մասնակիցը.

5) ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքելու պայմանագրեր.

6) իրականացնելու օրենքով չարգելված այլ գործունեություն:

21. Հիմնադրամը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ՝ միայն այն դեպքում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար ստեղծվել է հիմնադրամը և համապատասխանում է այդ նպատակներին:

22. Հիմնադրամը, իր կանոնադրական նպատակներին համապատասխան, կարող է անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

- 1) տարածքների վարձակալությամբ տրամադրում.
- 2) վերապատրաստման ծրագրերի մշակում .
- 3) դասընթացների, վերապատրաստումների կազմակերպում.
- 4) հրատարակչական գործունեություն:

23. Իր առջև դրված նպատակների արդյունավետ իրականացումն ապահովելու համար հիմնադրամը՝

1) ներգրավում է միջոցներ՝ իր կանոնադրական նպատակների իրականացման համար.

2) համագործակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հասարակական կազմակերպությունների, միջազգային տնտեսական ու ֆինանսական կառույցների, գործակալությունների և հիմնադրամների հետ.

3) իր կանոնադրական նպատակների իրագործման համար իրականացնում է այլ միջոցառումներ:

24. Հիմնադրամը պարտավոր է՝

1) գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին, այլ օրենքներին ու իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությանը համապատասխան.

2) օրենքով սահմանված կարգով վարել գործառնություն և հաշվապահական հաշվառում, անցնել տարեկան աուդիտ՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից ընտրված աուդիտորական կազմակերպության կողմից.

3) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ.

4) իրականացնել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

VI. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

25. Հիմնադրամի մարմիններն են՝

1) հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ).

2) հիմնադրամի գործադիր տնօրենը:

26. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը խորհուրդն է: Խորհրդի անհատական կազմը հաստատվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի ներկայացմամբ:

27. Հոգաբարձուների խորհրդի առաջին կազմի անդամների լիազորություններն սկսվում են հիմնադրամի պետական գրանցումից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալու հաջորդ օրվանից, իսկ եթե նշանակվել են հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամները, ապա դրա հաջորդ օրվանից: Խորհուրդը բաղկացած է 17 անդամից: Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը խորհրդի անդամ է ի պաշտոնե, մեկական ներկայացուցիչ նշանակվում է՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմից, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունից, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունից, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունից, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունից, Պարենի համաշխարհային կազմակերպությունից, այլ դոնոր կազմակերպություններից, ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններից:

Խորհրդի անդամները չեն կարող լինել հիմնադրամի մեկ այլ մարմնի անդամ:

28. Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

1) ներկայացնելու առաջարկություններ խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.

2) նախապատրաստելու և խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ ու որոշումների նախագծեր.

3) ստանալու տեղեկություններ հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի մասին.

4) ստանալու իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում.

5) համակարգելու հիմնադրամի նպատակներին վերաբերող հիմնադրամի գործունեության տարբեր ոլորտների կամ ուղղությունների աշխատանքը:

29. Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասում նշված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում:

30. Խորհրդի անդամի լիազորության դադարման դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով՝ ոչ ուշ, քան Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին հիմնադրամի գործադիր տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո 30 օրվա ընթացքում: Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում հիմնադրամի գործադիր տնօրենը տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին:

31. Խորհրդի իրավասություններն են՝

1) հիմնադրամի նպատակների իրականացման տարեկան և միջանկյալ ծրագրերի քննարկումն ու հաստատումը, դրանց կատարման նկատմամբ վերահսկումը, ծրագրերի իրականացման վերաբերյալ ընթացիկ և ամփոփիչ հաշվետվությունների քննարկումն ու հաստատումը.

2) հիմնադրամի բյուջեի և դրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների հաստատումը.

3) հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխություն, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը.

4) հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը.

5) հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.

6) հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) հիմնադրամի գործադիր տնօրենի ընտրությունը և նրան պաշտոնից ազատելը.

8) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.

9) սույն կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ հիմնադրամի գործադիր տնօրենի հաշվետվությունների լսումը և հաստատումը.

10) հիմնադրամի կառուցվածքի հաստատումը.

11) հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը.

12) հիմնադրամի կողմից կնքվող ցանկացած գործարքի՝ ներառյալ փոխկապակցված գործարքների հաստատումը, որոնց գումարը գերազանցում է 20,000,000 դրամը.

13) հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգի հաստատումը.

14) հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.

15) օրենքով, սույն կանոնադրությամբ սահմանված, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

32. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Խորհրդի նիստերում խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, եթե սույն կանոնադրությամբ ավելի մեծ թվով ձայներ նախատեսված չեն:

33. Հիմնադրամի գործադիր տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև հիմնադրամի անվանման փոփոխության, վերակազմակերպման, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման վերաբերյալ որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

34. Եթե խորհրդի նիստում քննարկվում է խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

35. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները, անհրաժեշտության դեպքում կարող է կազմավորել խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր՝ օրենքի 25-րդ հոդվածի առաջին մասի 10-րդ կետով նախատեսված, հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման (ստուգում, ուսումնասիրում և այլն) իրականացման և առաջին մասի 2-րդ, 3-րդ, 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ հոգաբարձուների խորհրդին եզրակացություններ (տեղեկանքներ) ներկայացնելու համար.

2) գումարում է խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.

3) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

4) որոշում է խորհրդի անդամների աշխատանքի համակարգման ոլորտները կամ ուղղությունները.

5) հիմնադրամի անունից աշխատանքային պայմանագիր է ստորագրում հիմնադրամի գործադիր տնօրենի հետ.

6) խորհրդի քննարկմանն է ներկայացնում խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ՝ օրենքի 23-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում:

36. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, խորհրդի որոշմամբ, կատարում է խորհրդի անդամներից մեկը:

37. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ՝ խորհրդի նախագահի կողմից: Խորհրդի նիստերը խորհրդի նախագահի կողմից կարող են հրավիրվել նաև խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ համապատասխան պահանջը ներկայացվելուց հետո 30 օրվա ընթացքում: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել հեռուստահամաժողովի, էլեկտրոնային փոստի կամ այլ կապի միջոցների կիրառմամբ, ինչպես նաև՝ հարցման կարգով: Խորհրդի նիստերին խորհրդի նախագահի հրավերով կարող են մասնակցել համապատասխան ծրագրերի իրականացման պատասխանատուներ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Խորհրդի նիստերի արձանագրությունները ենթակա են ստորագրման՝ խորհրդի նախագահի և տվյալ նիստին մասնակցող խորհրդի բոլոր անդամների կողմից:

38. Եթե սույն կանոնադրությամբ սահմանված ժամկետում խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստը կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք:

39. Հիմնադրամի գործադիր տնօրենը ղեկավարում է հիմնադրամի ընթացիկ գործունեությունը: Նրա իրավասությանն են պատկանում հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը:

40. Հիմնադրամի գործադիր տնօրենը կազմակերպում է խորհրդի որոշումների կատարումը, տարեկան մեկ անգամ խորհրդին ներկայացնում է հաշվետվություններ:

41. Հիմնադրամի գործադիր տնօրենը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է խորհրդի կողմից՝ բաց, մրցույթով: Մրցույթի իրականացման կարգն ու պայմանները սահմանվում են խորհրդի կողմից:

42. Հիմնադրամի գործադիր տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, սույն կանոնադրությամբ և նրա

հետ կնքված պայմանագրով: Հիմնադրամի անունից պայմանագիրն ստորագրում է խորհրդի նախագահը կամ խորհրդի կողմից լիազորված այլ անձ:

43. Հիմնադրամի գործադիր տնօրենը՝

1) տնօրինում է հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից.

2) ներկայացնում է հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

3) գործում է առանց լիազորագրի.

4) տալիս է լիազորագրեր.

5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

6) բանկերում բացում է հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.

7) խորհրդի հաստատմանն է ներկայացնում հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

9) աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

10) կնքում է պայմանագիր ընտրված աուդիտորական կազմակերպության հետ:

11) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին.

44. Խորհուրդն իրավունք ունի լուծելու գործադիր տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ օրենքով, սույն կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով:

VII. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

45. Հիմնադրամն ինքնուրույն է պլանավորում իր գործունեությունը, մշակում զարգացման հեռանկարները և ընդունում իր գործունեության վերաբերյալ որոշումներ:

46. Հիմնադրամի՝ այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ գործունեության ընթացքում բոլոր հարաբերություններն իրականացվում են

պայմանագրային հիմունքներով: Հիմնադրամն ինքնուրույն է ընտրում իր կողմից կնքվող պայմանագրերի առարկան և պայմանները:

47. Իր կանոնադրական գործունեությունն իրականացնելիս՝ հիմնադրամն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ ընդունելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող ցանկացած որոշում:

VIII. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

48. Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարվում են, ինչպես նաև կանոնադրության փոփոխությունը և (կամ) նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատվում են խորհրդի որոշմամբ:

IX. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

49. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի՝ այլ հիմնադրամին միացման կամ այլհիմնադրամի հետ միաձուլման ձևով:

50. Հիմնադրամը վերակազմակերպվում է հիմնադրի որոշմամբ կամ խորհրդի որոշմամբ:

51. Հիմնադրամը, միաձուլման ձևով վերակազմակերպվելիս, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված հիմնադրամի պետական գրանցման պահից:

52. Հիմնադրամն այլ հիմնադրամի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս՝ դրանք համարվում են վերակազմակերպված՝ միացած հիմնադրամի գործունեության դադարման պետական գրանցման պահից:

53. Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումից հետո 30 օրվա ընթացքում հիմնադրամը պարտավոր է դրա մասին գրավոր ծանուցել իր բոլոր պարտատերերին: Ծանուցումը պետք է պարունակի տեղեկություններ վերակազմակերպման մասին որոշումն ընդունելու տարվա, ամսվա, ամսաթվի, վերակազմակերպման ձևի և մասնակիցների, ինչպես նաև հիմնադրամի պարտավորությունների իրավահաջորդության մասին:

54. Վերակազմակերպման մասին ծանուցման պահից 30 օրվա ընթացքում՝ վերակազմակերպվող հիմնադրամի պարտատերն իրավունք ունի հիմնադրամից պահանջելու պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ,

պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում:

55. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա:

56. Հիմնադրամը կարող է լուծարվել, եթե՝

1) հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար, և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ.

2) իր գործունեությամբ հիմնադրամը շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից.

3) հնարավոր չէ հասնել հիմնադրամի նպատակների իրականացմանը և փոփոխել այդ նպատակները.

4) հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները.

5) հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.

6) հիմնադրամն ստեղծելիս՝ հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ:

57. Հիմնադրամը կարող է լուծարվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

58. Դատարանի կողմից հիմնադրամի լուծարման մասին որոշման ընդունումից հետո խորհուրդը նշանակում է լուծարման հանձնաժողով (լուծարող) և, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի ու «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, սահմանում է լուծարման կարգն ու ժամկետները:

59. Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում հիմնադրամի գործերի կառավարման լիազորությունները: Հիմնադրամի անունից դատարանում հանդես են գալիս լուծարման հանձնաժողովի ներկայացուցիչները:

60. Լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝ լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:

61. Լուծարման հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (<http://www.azdarar.am>) զետեղում է հայտարարություն հիմնադրամը լուծարելու և պարտատերերի պահանջները ներկայացնելու կարգի ու ժամկետի մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսվանից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից, որը համարվում է հիմնադրամի լուծարման գործընթացի սկիզբ:

62. Լուծարման հանձնաժողովը վերագնահատում է գույքը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և դեբիտորական պարտքերի ստացման համար, ինչպես նաև պարտատերերին տեղեկացնում է հիմնադրամի լուծարման մասին:

63. Լուծարման ընթացքում հիմնադրամն իրավունք ունի կնքելու նոր գործարքներ և ստանձնելու նոր պարտավորություններ՝ միայն իր պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում:

64. Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացվելու ժամկետն ավարտվելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման միջանկյալ հաշվեկշիռ, որը պարունակում է տեղեկություններ լուծարվող հիմնադրամի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին:

65. Լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատում է հիմնադրամի խորհուրդը:

66. Լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումից հետո, եթե լուծարվող հիմնադրամի ունեցած դրամական միջոցներն անբավարար են պարտատերերի պահանջները բավարարելու համար, լուծարման հանձնաժողովը, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, հրապարակային սակարկություններով վաճառում է հիմնադրամի գույքը:

67. Լուծարման հանձնաժողովը լուծարվող հիմնադրամի պարտատերերին վճարումներ է կատարում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ և լուծարման միջանկյալ հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հաստատման պահից:

68. Պարտատերերի պահանջների բավարարումից հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա

անհնարինության դեպքում փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

69. Հիմնադրամի գույքի ամբողջական բաշխումն իրականացնելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում խորհրդին՝ հաստատման: Լուծարման հանձնաժողովը խորհրդի հաստատած լուծարման հաշվեկշիռը ներկայացնում է դատարան՝ հաստատման:

70. Լուծարման հանձնաժողովը հաստատված լուծարման հաշվեկշիռը՝ օրենքով սահմանված մյուս փաստաթղթերի հետ միասին, ներկայացնում է իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ հիմնադրամի լուծարման պետական գրանցում կատարելու համար:

71. Հիմնադրամի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած՝ լուծարման պետական գրանցման պահից:

72. Խորհրդի կողմից սույն կանոնադրության 58-րդ, 65-րդ և 69-րդ կետերով սահմանված իր լիազորությունները երկամսյա ժամկետում (համապատասխանաբար դատարանի կողմից որոշման ընդունման, լուծարման հանձնաժողովի կողմից լուծարման միջանկյալ հաշվեկշիռը և լուծարման հաշվեկշիռը ներկայացվելու պահից) չկատարվելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը հիմնադրամի լուծարման հետ կապված լիազորությունների իրականացման նպատակով երկամսյա ժամկետում նշանակում է ժամանակավոր խորհուրդ:

Հիմնավորում

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությունը (Ռազմավարություն) մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» N ՆՀ-37-Ն հրամանագրի և Հայաստանի Հանրապետության կառավարության՝ «ՀՀ հեռանկարային զարգացման ծրագիրը հաստատելու մասին» որոշման հիմնադրույթներին համապատասխան: Ռազմավարության հիմքում դրվել է նաև Միավորված Ազգերի Կազմակերպության Պարենի համաշխարհային ծրագրի (ՄԱԿ ՊՀԾ)՝ «Կայուն դպրոցական սննդի զարգացումը Հայաստանում» ծրագիրը: Այն միաժամանակ բխում է ՀՀ կառավարության և ՄԱԿ ՊՀԾ միջև համատեղ ստորագրված՝ «Դպրոցական սնունդ» զարգացման ծրագրի գործողությունների պլանից:

2. Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

Ռազմավարության նպատակն է ստեղծել դպրոցական կայուն սննդի համակարգ, որը հնարավորություն կտա ապահովել Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտների առողջ սնունդը, բարելավել նրանց առողջությունն ու հաղթահարել աղքատությունը, նպաստելով մի շարք ուսումնական, սոցիալական, առողջապահական և հոգեբանական խնդիրների լուծմանը:

2010թ. Հայաստանում իրականացնում է «Դպրոցական սնունդ-200128» զարգացման ծրագիրը, որի ընթացքում Հայաստանն արձանագրել է դրական արդյունքներ: Ծրագիրն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության կառավարության ֆինանսավորմամբ, որն էլ 2010-2017թթ. Համար կատարել է 24,682,590 ԱՄՆ դոլլարի ներդրում: Նշյալ գումարից 15.690.740 ԱՄՆ դոլլար ծախսվել է սննդի և դրա ձեռքբերման հետ կապված խնդիրները լուծելու համար, իսկ մնացած գումարը՝ 8.991.850 ԱՄՆ դոլլար, ծախսվել է կարողությունների զարգացման և ավելացման (1.890.970 ԱՄՆ դոլլար) և ուղղակի ու անուղղակի ծախսերի (7.100.880 ԱՄՆ դոլլար) համար:

Ներկայումս ՀՀ տասը մարզերի նախակրթարանների և կրտսեր դասարանների մոտ 83.000 երեխաների համար, որոնք շաբաթը 5 օր, տարեկան 180 օր ստանում են դպրոցական տաք սնունդ: Յոթը մարզերում, ՄԱԿ-ի ՊՀԾ միջոցով, մոտ 60.000 երեխաների հաշվարկով դպրոցներին հատկացվում է յոթ

տեսակի սնունդ (բրինձ, մակարոն, հնդկաձավար, ձեթ, ալյուր և այլն): ՀՀ կառավարությունն, իր հերթին, 2014թ. ֆինանսավորում է երեք մարզերի (Արարատ, Վայոց Ձոր, Սյունիք) դպրոցների մոտ 23000 աշակերտի՝ տրամադրելով մեկ երեխայի հաշվարկով օրական 140 ՀՀ դրամ, որից 120 դրամն օգտագործվում է սնունդ պատրաստելու, իսկ 20 դրամը՝ խոհանոցային աշխատակիցների աշխատավարձի և կազմակերպական ծախսերի համար (Դպրոցական Սննդի Ազգային Ծրագիր): Այս նպատակով ՀՀ կառավարության կողմից ներկայումս հատկացվում է տարեկան մոտ 500.000 հազար դրամ: ՀՀ կառավարությունը ֆինանսավորում է նաև ՄԱԿ ՊՀԾ տրամադրած օգնության պահեստավորման և երկրի ներսում փոխադրման ծախսերը հոգալու, որոնք կազմում են տարեկան 49.000 հազար ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ծրագրի շարունակականությունն ու կայունությունն ապահովելու համար, անհրաժեշտ է համարում ստեղծել «ԿԱՅՈՒՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՍՆՈՒՆԴ» հիմնադրամ (Հիմնադրամ), որին կփոխանցվի ՄԱԿ ՊՀԾ հայաստանյան գրասենյակի փորձը և գործառույթների մի մասը, ինչպես նաև Դպրոցական Սննդի Ազգային ծրագրի կառավարման գործառույթը:

Բանակցությունների ընթացքում ձեռք է բերվել համաձայնություն, որ ՀՀ կառավարության կողմից հիմնադրամի ստեղծման դեպքում հիմնական դոնորը՝ ՌԴ կառավարությունը միջոցների հատկացումը կկատարի անմիջական հայկական կողմին, որի շնորհիվ հնարավորություն կստեղծվի էականորեն կրճատել ծրագրի իրականացման համար այժմ կատարվող ուղղակի և անուղղակի կազմակերպական ծախսերը, ինչպես նաև զգալիորեն նվազեցնել խորհրդատվական և վերլուծական աշխատանքների վրա ծախսվող գումարները՝ դրանք ուղղորդելով երեխաներին տրամադրվող սննդի որակի բարելավմանը:

Հիմնադրամի ստեղծումը հնարավորություն կտա աշխատանքներում ներգրավել երեխաների սնուցման հարցերով զբաղվող այլ երկրների կառավարություններ, կազմակերպություններ, անհատներ, ինչպես նաև գործարար շրջանակների և սփյուռքի ներուժը: Ֆինանսների կենտրոնացման շնորհիվ կարելի է նաև բարձրացնել գնումների արդյունավետությունը, ինչպես նաև ակտիվացնել տեղական արտադրությունը և գյուղացիական տնտեսությունները՝ տեղական արտադրանքն ընդգրկելով դպրոցական սննդում: Հիմնադրամի ստեղծումը հնարավորություն կտա բարձրացնել դպրոցական սննդի կազմակերպման մեջ ներգրավված անձանց մասնագիտական որակավորումն ու վերապատրաստել դպրոցական աշխատակազմը, ինչպես նաև բարձրացնել դպրոցների տեխնիկական հագեցվածությունն ու բարելավել շենքային պայմանները:

3. Ակնկալվող արդյունքը

Հիմնադրամի ստեղծումը կբարձրացնի Ծրագրի իրականացման արդյունավետությունը, և կապահովի ծրագրի կառավարման սահուն փոխանցումը ՊՀԾ-ից հայաստանյան կողմին:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<Կայուն դպրոցական սնունդ>> հիմնադրամ ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտության չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<Կայուն դպրոցական սնունդ>> հիմնադրամ ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում կարող է փոփոխություններ առաջացնել:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ
դիտողությունների և առաջարկությունների

Գերատեսչության անվանումը	Դիտողություններ և առաջարկություններ	Նշումներ կատարման վերաբերյալ
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	Դիտողություններ ու առաջարկություններ չկան:	
ՀՀ Ֆինանսների նախարարություն	<p>ՀՀ կառավարության 2013 թ. օգոստոսի 22-ի «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությանն ու դրա իրականացման միջոցառումների ծրագրին և փորձնական ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրով՝ Նախագծով առաջարկվող պետական (բյուջետային) ֆինանսավորմամբ, «Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամի ստեղծում նախատեսված չէ: Ուստի վերը նշված հարցին հնարավոր կլինի անդրադառնալ՝ ծրագրային հիմքերի առկայության դեպքում:</p> <p>Ինչ վերաբերում է Նախագծի 6-րդ կետով նախատեսված՝ կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանն աջակցելու նպատակով հիմնադրամին ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից գումարի հատկացմանը,</p>	<p>Ընդունված է:</p> <p>Ներկայացվել է ՀՀ կառավարության 2013 թ. օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրային որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:</p> <p>Նախագծի 6-րդ կետով նախատեսված՝ կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանն աջակցելու նպատակով հիմնադրամին ՀՀ 2016 թ. պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից գումարի հատկացման</p>

	<p>ապա հայտնում ենք, որ ներկայացված չեն այդ գումարի օգտագործման ուղղությունները, ինչպես նաև բացակայում են համապատասխան հաշվարկները:</p>	<p>վերաբերյալ դրույթը հանվել է , նախագծի 5-րդ կետի 3-րդ ենթակետը լրացվել է «Ֆինանսական միջոցներ» բառերով:</p>
<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>1. Նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 6-րդ կետով նախատեսվում է հիմնադրամին տրամադրելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարությանը գումար հատկացնել, ինչն արտացոլված չէ նախագծի վերնագրում: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որոնց համաձայն՝ իրավական ակտի վերնագիրը պետք է համապատասխանի իրավական ակտի բովանդակությանը և հակիրճ տեղեկատվություն պարունակի դրա կարգավորման առարկայի մասին:</p> <p>2. Նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջները, նախագծի նախա-բանում անհրաժեշտ է նշել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի այն հոդվածը, ի կատարումն որի նախատեսվում է ընդունել ներկայացված որոշման նախագիծը:</p> <p>3. Նախագծով հաստատվող կանոնադրության /այսուհետ՝ կանոնադրություն/ 6-րդ կետի 3-րդ ենթակետում հիմնադրամի</p>	<p>Ընդունված է:</p>

	<p>անվանման անգլերեն տարբերակում անհրաժեշտ է լրացնել չակերտները:</p> <p>4. Կանոնադրության 7-րդ կետում անհրաժեշտ է պարտադիր սահմանել հիմնադրամի գտնվելու վայրը և փոստային դասիչը:</p> <p>5. Կանոնադրության 8-րդ կետն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«8. Հիմնադրամի շահառուներն են ուսումնական հաստատություններն ու դրանց սովորողները, «Կայուն դպրոցական սնունդ» ռազմավարությանն ու դրա իրականացման միջոցառումների ծրագրին առնչվող կամ նույն ծրագրում ներգրավված ՀՀ և օտարերկրյա առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները և քաղաքացիները: »:</p> <p>6. Կանոնադրության 14-րդ կետի 6-րդ ենթակետում անհրաժեշտ է նշել, թե հիմնադրամն ում է առաջարկներ ներկայացնելու:</p> <p>7. Կանոնադրության 26-րդ կետի 2-րդ նախադասությունում «որոշմամբ» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի ներկայացմամբ» բառերը: Նույն կետի 3-րդ նախադասության համաձայն՝ Խորհրդի առաջին կազմի անդամների լիազորություններն սկսվում են հիմնադրամի պետական գրանցման հաջորդ օրվանից, եթե նշանակվել են Խորհրդի բոլոր անդամները: Վերոնշյալ</p>	
--	--	--

	<p>դրույթները հակասում են նախագծի 5-րդ կետի 2-րդ ենթակետին, որը սահմանում է. «Հիմնադրամի պետական գրանցու-մից հետո եռամսյա ժամկետում հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անհատական կազմը ներկայացնել ՀՀ վարչապետին՝ հաստատման»: Այդ առումով նախագծի 26-րդ կետի 3-րդ նախադասությունն առաջարկվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Հոգաբարձուների խորհրդի առա-ջին կազմի անդամների լիազորու-թյուններն սկսվում են հիմնադրամի պետական գրանցումից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալու հաջորդ օրվանից, իսկ եթե նշանակվել են հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամները, ապա դրա հաջորդ օրվանից:»:</p> <p>8. Առաջարկում ենք կանոնադրության 26-րդ կետում լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«ՀՀ կրթության և գիտության նախարարը խորհրդի անդամ է ի պաշտոնե:»:</p> <p>9. Կանոնադրության 30-րդ կետում «հիմնադրին, խորհրդի անդամներին նշանակած անձանց կամ մարմիններին,» բառերը փոխարինել « ՀՀ կրթության և գիտության նախարարին,» բառերով:</p> <p>10. Կանոնադրության 31-րդ կետում բացակայում է 13-րդ</p>	
--	---	--

	<p>ենթակետը: Այդ առումով նախագծում անհրաժեշտ է ապահովել հիշյալ կետի ենթակետերի հաջորդական համարակալումը՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջների:</p>	
<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:</p>	<p>«Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամ ստեղծելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ առաջարկվում է հետևյալը.</p> <p>1. նախագծի նախաբանում հղում կատարել «ենթակետում պարզ բյուջետային համակարգի մասին» ենթակետում պարզ օրենքին՝ հաշվի առնելով նախագծի 6-րդ կետը,</p> <p>2. նախագիծը համապատասխանեցնել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասին,</p> <p>3. նախագծի N1 հավելվածի 43-րդ կետում լրացնել օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի դրույթները,</p> <p>4. նախագծի N 1 հավելվածի 6-րդ կետում հստակեցնել հիմնադրամի կանոնադրական կապիտալի չափը «2016 թվականին հատկացնել 10000000 հազ. դրամ», ինչպես նաև ճշտել որոշման նախագծի համարակալումը:</p>	<p>1.Ընդունված է:</p>
<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի</p>	<p>Դիտողություններ ու առաջարկություններ չկան:</p>	

Նախարարություն		
<p style="text-align: center;">ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>Դիտողություններ առաջարկություններ չկան:</p>	<p style="text-align: right;">ու</p>
<p style="text-align: center;">ՀՀ կառավարության աշխատակազմ</p>	<p>1. Նախագծի 4-րդ կետում՝ «(նույնականացման քարտ 003584257, տրված՝ 15.12.2014թ., 009-ի կողմից)» բառերն անհրաժեշտ է հանել, քանի որ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ օրենք) նման պահանջ նախատեսված չէ:</p> <p>2. Նախագծի 5-րդ կետի 1-ին ենթակետի «և դրա հիմնադրի՝ օրենքով սահմանված մյուս լիազորությունների իրականացումը» բառերն անհրաժեշտ է հանել, քանի որ հիմնադիրը՝ ՀՀ կառավարությունը, օրենքով նախատեսված իր լիազորություններն իրականացնելու է առանց որևէ ապահովման միջոցների:</p> <p>3. Նախագծի 3-րդ կետով հաստատված «Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) կանոնադրության (այսուհետ՝ կանոնադրություն) 4-րդ կետում անհասկանալի է, թե հիմնադրամն օտարերկրյա պետությունում ինչ գործառույթներ է իրականացնելու:</p> <p>4. Կանոնադրության 3-րդ բաժնի վերնագրից և տեքստից անհրաժեշտ է հանել</p>	<p>Ընդունված է:</p> <p>2. Ընդունված է:</p> <p>3. Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված է, որ հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ-ում և (կամ) օտարերկրյա պետություններում, ինչի վերաբերյալ օրենքում արգելող դրույթներ չկան, իսկ հիմնադրամը օտարերկրյա պետությունում գործունեությունն ծավալելու պարագայում կենթարկվի տվյալ պետության օրենսդրական դաշտին:</p> <p>4. Հիմնադրամների</p>

	<p>հիմնադրամի գործառույթները, քանի որ ենք 15-րդ հոդվածում կանոնադրության մեջ գործառույթների սահմանում նախատեսված չէ:</p> <p>5. Կանոնադրության 13-րդ կետի 2-րդ ենթակետում պարզ չէ, թե հիմնադրամն ինչպես է սննդի ապահովմամբ բարելավելու սովորողների կրթության որակը:</p>	<p>մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածում նախատեսված է , որ կանոնադրությամբ կարող են սահմանվել օրենքին չհակասող այլ դրույթներ:</p> <p>5. ՄԱԿ Պարենի համաշխարհային ծրագիրը և Բոստոնի խորհրդատվական ընկերությունը իրականացրել են եկամուտների և ծախսերի վերլուծություն (Cost Benefit Analysis), որպեսզի պարզեն Հայաստանում որքան արդյունավետ է իրականացվում դպրոցական սնուցման ծրագիրը և ինչպիսի երկարաժամկետ տնտեսական փոխհատուցում է ապահովում: Համաձայն վերլուծության, այն երկրները, որոնք 1 (մեկ) ԱՄՆ դոլար են ներդնում դպրոցական սնուցման համար, միջինում ստանում են 3-8 ԱՄՆ դոլար փոխհատուցում սոցիալական ապահովության, առողջապահության և կրթական ոլորտներում: Հայաստանի դեպքում այդ փոխհատուցումը կազմում է 7.1 ԱՄՆ դոլար: Բացի ակնհայտ սոցիալական և առողջապահական արդյունքից, ծրագիրը նաև մեծագույն կրթական ազդեցություն ունի: Այն օգնում է բարելավել երեխաների հաճախելի-</p>
--	--	--

	<p>6. Կանոնադրության 20-րդ կետում անհասկանալի է, թե հիմնադրամին ինչու է անհրաժեշտ լինելու մամուլի և զանգվածային միջոցների հիմնադրումը:</p> <p>7. Կանոնադրության 22-րդ կետն 1-ին, 2-րդ, 4-րդ կետերն անհրաժեշտ է հանել կամ խմբագրել:</p> <p>8. Կանոնադրության 24-րդ կետի 1-ին ենթակետում անհրաժեշտ է նախատեսել նաև միջազգային պայմանագրերը:</p> <p>9. Կանոնադրության 31-րդ կետի 1-ին ենթակետն անհրաժեշտ է հանել կամ խմբագրել, քանի որ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով՝ բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում վերահսկողություն իրականացնելու դեպքերը, պայմանները և կարգը, իսկ օրենքով խորհրդին նման իրավասություն վերապահված չէ:</p>	<p>ությունը, բարձրացնել աշակերտների կենտրոնացումը և թույլ է տալիս նրանց ավելի մեծ ներուժով զբաղվել ուսումնական գործընթացով: Համաձայն նույն վերլուծության՝ դպրոցական սննդի ծրագիրը նպաստում է նաև երեխաների առաջադիմության բարձրացմանը:</p> <p>6. Ընդունված է.</p> <p>7. Ընդունված է. աշխատանքային կարգով քննարկման արդյունքում կետերը խմբագրվել են.</p> <p>8. Ընդունված է.</p> <p>9. Աշխատանքային կարգով քննարկման արդյունքում «վերահսկողություն» բառը փոխարինվել է «վերահսկում» բառով, ինչը բխում է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի դրույթներից.</p>
--	--	---

	<p>10. Կանոնադրության մեջ անհրաժեշտ է նախատեսել դրույթ, համաձայն որի «Կառավարիչը՝ տնօրինում է հիմնադրամի գույքը»:</p> <p>11. Կանոնադրության 43-րդ կետի 7-րդ ենթակետում «ծրագրերի իրականացման խմբերի գործունեության կարգերը» բառերը հստակեցման կարիք ունեն:</p> <p>12. Նախագծի մի շարք կետերում նախատեսված են դրույթներ, համաձայն որոնց՝ անվանման փոփոխության, վերակազմակերպման, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ հաստատման վերաբերյալ որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ կամ խորհրդի իրավասություններն են՝ հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխություն, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը: Այս առնչությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հիմնադրամը ստեղծում և վերջինիս կանոնադրությունը հաստատում է ՀՀ կառավարությունը՝ ՀՀ կառավարության որոշմամբ և որտեղ համապատասխան փոփոխություններ կարող է իրականացնել միայն ՀՀ կառավարությունը՝ համապատասխան իրավական ակտով:</p>	<p>10. Ընդունված է.</p> <p>11. Ընդունված է.</p> <p>12. Աշխատանքային կարգով քննարկման արդյունքում կետը մնացել է անփոփոխ, ինչը բխում է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի դրույթներից և կորպորատիվ իրավունքի սկզբունքներից.</p> <p>13. Աշխատանքային կարգով քննարկման</p>
--	---	---

	<p>13.Նախագծում առկա են նաև իրավական տեխնիկայի և ձևակերպումների հետ կապված խնդիրներ, որոնք առաջարկում ենք աշխատանքային կարգով քննարկել:</p>	<p>արդյունքում որոշ ձևակերպումներ խմբագրվել են:</p>
--	---	---